



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share – copy and redistribute the material in any medium or format

Adapt – remix, transform, and build upon the material

ՀՈԽՀ ՀՅԴ. ԺՈՂՈՎՐԾԱՑ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՍՉԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ
№ 3 (95)

Ա. ՅԵ. ՊԵՏՐՈՎ

ԿԵՐԻ ՍԻԼՈՍԱՑՈՒՄԸ



Հ Տ Ա Տ

1930

Տ Ե Ր Ե Վ Ա Ն




ՀՈՒՅԱՆ ՀՈՊ ԺՈՂՈՎՐԾԱՑ
ԳՅՈՒՂԱՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՏՁԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ
№ 3 (95)

Ա. ՅԵ. ՊԵՏՐՈՎ

ԿԵՐԻ ՍԻԼՈՍԱՑՈՒՄԸ

Ա 24581
II



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ. ՅԵՐԵՎԱՆ - 1930

Հըմատ. № 1358

Գրառեալ. № 5456 (բ) Պատ. № 773 Տիրաժ 4000

Պետհրատի յերկրորդ տպարան Յերևանում

Ի՞նչ կերեր Են ՊԵՏՔ ԿԱՅՆԱՏՈՒ ԱՆԱՍՈՒՆԻՆ

Կարող և արդյոք մարդ միայն հացով սընվեծ տռանց կաթի, կարտոֆիլի և այլ մթերքներին իհարկե վճչ Այգալիսի մարդը կլղարի, նրա բաշը կպակսի, իսկ նետո յել կմեռնի:

Ճիշտ նույնպես ել անասունը չի կարող միայն խոտով, գարմանով և այլ կոշտ կերերով կանոնավոր սնունդ ստանալը Բացի այդ կերերից, անասունը կարիք ունի նաև ուժեղ կերերի՝ հացահատիկի, քուսպերի, թեփերի:

Իսկ կաթնատու անասունը կարիք ունի նայել նյութալի կերի՝ կարտոֆիլի և արմատապտուղների, ճակնդեղի, շաղգամի և այլն:

Անասունը կանոնավոր կարելի յե կերակրել միայն այն գեպքում, յերբ տնտեսության մեջ կան բոլոր այս կերերը:

Կուտ յեվ ուժեղ կերերը կաթնատու անասունին տալիս են այն ամենը, ինչ անհրաժեշտ է նրա մարմինը սնելու համար: Դրանք տալիս են նաև այն նյութերը, վորոնցից բաղկացած և կաթը:

Իսկ կաթալի կերերը նպաստում են, վորուն նյութերից ավելի մեծ քանակով կաթ կազ-

մըզի: Դրա համար ե, վոր նյութալի կերերը կաքնաբեր կերեր են կոչվում:

Վոչ մի լավ կաթնատնտեսություն չի կարող յոլա գնալ առանց հյութալի կերերի: Շատ դյուղացիք հասկացել են դրանց ոգուտը և սկսել են արմատապտուղներ մշակել ծավալին միայն այն ե, վոր դրանք անբավարար քանակով են մշակվում: Սովորաբար արմատապտուղներն հերիքում են ձմեռվա կիոից քիչ ավելին:

Նույնիսկ բազմաթիվ առաջադեմ տնտեսությունների մեջ ձմռան յերկրորդ կիսին կաթնատու անասունը մեծ մասամբ միայն չոր կերերով ե կերակրվում: Դրանից կիթը շատ ե պակասում:

Ցեթե արմատապտուղներն ավելի շատ լինելին, այդ դեպքում այլ կերեր քիչ կծախսվելին: Գարնան սկզբին անասունը սոված չեր մնա, այլ մինչև արոտ դուրս գալը կանոնավոր կկերակրվեր: Իսկ կանաչ կերի ընկնելիս, կովերի կիթը միանգամից կավելանար ու նրանք կազդուրվելու համար ժամանակ չելին կորցնի:

Ճիշտ ե, արմատապտուղ շատ ու շատ ե հարկավոր: Լավ կաթնատու կովին դրանից որական 30 կիլոգրամ պետք ե տալ:

Բայց դուրս ե դալիս, վոր արմատապտուղների պակասը կարելի յե այլ հյութալի կերով:

սիլոսագ լրացնել, Յեզ այդ կերը ավելի եճան է, տվելի մատչելի յէ գյուղացիներին, ինամբ չի պահանջում յեզ չի փչանում պահելիս:

Ի՞ՆՉԻՑ ԿԱՐԵԼԻ ՅԵ Ս-ԼՈՍ ԱՆԵԼ

Յեթե ամառը դյուզով անցնենք, կնկառնք, թե շենքերի և ցանկազատերի մոտ ինչ-քան դանազան մոլախոտեր են փարթամ աճում:

Քիչ և տակը թե դրանք անոգուտ են աճում: Մոլախոտերը սեծ վճառ են տալիս:

Մոլախոտերի վրա բազմանում են պասառաները:

Յերբ մոլախոտերի սերմերը հասնում են, դրանք քամու միջոցով տարանվում են և աղտոտում դաշտերը: Այդ սերմերից նոր մոլախոտեր են աճում ևլ ավելի մեծ քանակով:

Մոլախոտերը բռնում են ամբողջ հողը և ուժառագան են անում այն: Բացի այդ, նրանք խլում են կուլտուրական բոյսերի սնունդը և խեղդում են նրանց:

Բայց կարելի յէ այնպես անել, վոր այդ մոլախոտերից վոչ թէ վճառ այլ ոգուտ ստացվի: Գուրս և զալիս վոր լրանցից ռաս լավ բրգացրած կեր կարելի յէ ստանալ:

Ինչպես կաղամբը քրու յեն բռնում արաջների մեջ, նույնպես ևլ բոլոր այս մոլախո-

տերը թթու յեն բռնում հասարակ փոսերի մեջ,
կամ ել, վոր ավելի լավ ե, հատուկ տեղերում,
սիլոսի աշտարակներում:

Ահա այս կերպ քրու դնելն ինենց կոչվում
ե կերերի սիլոսացում կամ պարզապես՝ Սիլոս:

Սիլոսի համար բույսը կանաչ պետքական
ե այն ժամանակ, յերբ նա լրիվ ծաղկած եւ կա-
րելի յե սիլոսացնել կաղամբի տերե, բազուկի
թեր (տերեներ), շաղզամի թեր, նույնիսկ
կարտոֆիլի տերեվներ: — Միայն թե դրանք պիտի
վերցնել կանաչ ժամանակ:

Առանձնապես լավ ե յեղինջից, կրատու-
կից, տաւակից պատրաստված սիլոսի կետը:
Մատղաշ բուժն ել պիտանի յե սիլոսի համար:

Յեթե այդ բոլորից լավ սիլոսացված կեր
ե ստացվում, այն ժամանակ իհարկե ել ավելի
լավ կրտացվի լավ բույսերից:

Շաւաշատերը սիլոսի համար մշակում են
յեգիպտացորենի «Զիան ատամ» կոչվածի խակը:
Սիլոսի համար պիտի չսպասել, միեչև յեգիպ-
տացորենը լիովին հասունանա: Դա կարելի յե
գործածել սիլոսի համար այն ժամանակ, յերբ
կսկսի բներ բռնել: Այդ պատճառով ել սիլոսի
համար յեգիպտացորեն կարելի յե մշակել վոչ
միայն հարավում, այլ ե բավականաչափ դեպի
հյուսիս լնիկած վայրերում:

Սիրոսի համար լավ և նաև աւելածադարիկը «Հերոյլգ» կոմմունան Բուսառաւանում արհածաղիկ և մշակում հատկապես սիրոսի համար։ Դա պետք է հնձվի այն ժամանակը, յերբ զլուխը լավ մեծացած ու ծաղկած կլինի։ Լիովին հաստանանալուն պիտի չսպասել։ Դրա համար ել սիրոսի համար արեածաղիկ կարելի յեմշակել վոչ միայն տաք, այլ և ցուրտ տեղերում, մինչեւ անդամ Բուսառաւանի Հյուսիսային յերկրում։

Վիկը ընդհանրապես գժվար և չորացնել Յեթե հաջողվում ել և չորացնել, այդ գեպքում տերեներն ու ցողունների ամենաքնքուշ մասերը հովաքելիս փշրվում-թափվում են։ Սակայն հենց այդ մասերն ել ամենասննդարտը նյութերն են պարունակում։ Դրա համար ել ամենից լավի և վիկը սիրոսացնել։

Ընդհանրապես լավագույն սիրոս ստացվում են յերենուկից, առվույտից յեվ այլ կերի խոտերից։ Սիրոսում են նույնիսկ արմատապառ զները։

Սիրոսացնել չի կարելի զանազան փշերը, ձիազին ու այլ վսասակար խոտերը։

Սիրոսի համար կերի բույսեր լավ կլինի, յեթե կուլեկտիվ կերպով մշակվեն։ Պետք են դրանց համար հատուկ հողամաս հատկացնել և ընդհանուր ուժերով մշակել։

Ի՞ՆՉ Ե ՏԱԼԻՍ ՄԻԼՈՍԸ

Սիլոսը հյութալի կերի զգալի հավելում և
տալիս ի հաշխվ այնպիսի բույսերի, վորոնց
անասունը չի ուտում և վորոնք անողութ կփչա-
նային, յեթե չսիլոսացվեյին:

Սիլոսացնելն ոգտակար ե նաև ահա ինչ
կողմից: Հունձի ժամանակ հաճախ յերկարատե
անձրևային յեղանակ ե լինում, խոտը սկսում ե
նեխել: Այդպիսի դեպքերում և՛ յերեքնուկը, և՛
վիկը, և՛ մարգաղետնի խոտերը կարելի յե ա-
զատել՝ սիլոսացնել:

«Մատվեյկո՛յ» խորհրդային տնտեսությունը
(Ռուսաստան, Զվենիգորոդի շրջան) սկսեց ա-
նասունը սիլոսով կերակրել ՚Երանից նետ կա-
րի կիրը զգալի չափով ավելացավ: Իսկ յերբ
սիլոսը վերջացավ, կիթն ել պակասեց:

«Ներոլի» կոմմունան սիլոսի համար արե-
վածաղիկ ե մշակում: Նույնիսկ լավ յեղանակին
ել կոմունան վիկը չի չորացնում, այլ ամբողջը
սիլոսում ե: Փորձը ցույց ե տվել վոր դա ան-
համեմատ ավելի ոգտավետ ե:

Այժմ «Ներոլի» իր անասունը սիլոսով ե
կերակրում ամրող տարին: Անասունը զալիս է
մայիսյան հյութալի արոտից, բայց և այնպիս
ախորժակով սիլոս ե ուտում:

Այս կոմմունան սիլոսի բույսեր մշակելուն
և հատկացրել իր դաշտերի կեսից ավելին։ Ահա
թե ինչքան ձեռնտու յե սիլոսը

Հաշիվները ցույց են տվել վոր արեածա-
ղիկի սիլոսը արմատապտուղներից ավելի ձեռն-
տու յե։ Մի ցենտներ կերի ճակնդեղի արտա-
զրությունը տնտեսության վրա 80 կոպեկ ծախք
և նստում։ Մի ցենտներ վիկի ու վարսակի
խառնուրդի արտադրությունը 60 կոպեկ և
նստում, իսկ նույն քանակով արեածաղկինը՝
միայն 36 կոպ։

Ահա, ել ինչով ե լավ սիլոսը։ Անցյալ տար-
վա չոր խոտը վատ և թարմից։ Արմատապտուղ-
ները ձմբան վերջին փշանում են։ Իսկ սիլոսը
բոլորովին չի փչանում, յերե մնում ե նայեվ
նետեվյալ սարին։

Սիլոսված կերը կովը լավ ե մարսում։ Մի-
լոսը կաթնաբեր կեր և համարվում։ Դա ավե-
լացնում և կաթի քանակը այլ և գոմաղբի քա-
նակը, վորը գործադրվելով վորպես պարարտա-
նյութ, նպաստում ե բերքի քարձրացմանը։

ԻՆՉՊԵՍ ՊԻՏԻ ԿԵՐԱԿՐԵԼ ՍԻԼՈՍՈՎ

Անասունն աղահությամբ ե սիլոսը ուտում։
Բայց նրան աստիճանաբար պետք ե վարժեցնել
սիլոսին

Կովերին սիլոս պետք ե տալ ծնելուց մի
ամիս առաջ: Իսկ մատղաշին սիլոս պիտի տալ
մի տարեկանից՝ սկսած:

Սիլոսով պիտի կերակրել կթի կովերին և
վոչխարներին: Խոշոր կովին՝ 16 կիլոգրամ, իսկ
վոչխարին՝ $1\frac{1}{2}$ կիլոգրամ սիլոս են տալիս որա-
կան, յերկու անգամին:

Սիլոս տալիս ոգտակար ե ամեն մի գլուխ
անասունի բաժնին 20 գրամ աղ շաղ տար:

Սիլոսը պետք ե տալ կիթից հետո, յերբ
կաթը գոմից տարված ե արդեն: Իսկ յերբ ա-
նասունը սիլոսն ուտի, վերջացնի, գոմը պիտի
ողափոխել:—Սիլոսը սուր հոտ ունի, և այդ հո-
տը կարող կաթին տալ:

Սիլոսը բացողյա շուտով փշանում ե: Զի
կարելի փոսից սիլոսը ավելի հաճել, քան պետք
ե մի անգամ տալու համար: Անասունի առաջից
ավելացած սիլոսը պետք ե զցել աղբի մեջ, իսկ
մսուրը պետք ե լավ մաքրել:

Սիլոսը փոսից պիտի հավասար շերտերով
ու ամբողջ մակերեսով վերցնել: Յերբ փոսը ամ-
բողջովին դատարկվեց, պետք ե լավ մաքրել այն:
Իսկ յեթե փոսը ցեմենտած ե, պետք ե յեռման
ջրով լվանալ:

Սառած սիլոսը կարելի յե սառը բացվելուց
անմիջապես հետո տալ: Յեթե սառը բացվելուց

հետո թողնվի, զա արագությամբ կհուսին Հո-
տած սիլոս վոչ մի դեպքում չի կարելի տալ
անսառունին:

ԻՆՇՊԵՍ ՊԱՏՐԱՍԵԼ ՍԻԼՈՍԸ

Ամենից առաջ պիտի սիլոսացվող բույսերի
մի փունջ վերցնել և ձեռքերով վոլորել: Յեթե
վոլորելիս կաթը կաթիլ-կաթիլ չի բափվում,
այն ժամանակ կարելի յելցնել սիլոսի փոսի մեջ:

Իսկ յեթե հյութը կաթիլ-կաթիլ եթափվում
այդ դեպքում կանաչ մասսան չափից դուրս
արգեն թաց եւ Յեթե կարելի յե, պետք ե այդ
մասսան արեի տակ քիչ ցամաքացնել:

Իսկ յեթե ցամաքեցնել չի կարելի, այն ժա-
մանակ կանաչ մասսային պիտի բառորդ մասի
չափ չոր մղեղ կամ դարձան ավելացնել: Հա-
մարյա միշտ պիտի ալդպես անել, յերբ շաղգա-
մի կեր ե սիլոսացվում:

Շաղկամի կերը շատ հյութ ե պարունա-
կում: Սիլոսելիս հյութը դուրս ե տալիս ութե-
րը լողում ե զբա մեջ, և ավ սիլոս չի դուրս
դալիս: Դրա համար ել շաղգամի թերը չի կա-
րելի առանց ցամաքեցնելու կամ չոր կերեր
խառնելու սիլոսել:

Արեվածադիկը, և հատկապես յեզիալտացո-
րենը, սիլոսելիս պետք ե դրանք վորքան կարե-

լի յե մանր կտրտվեն: Դրանց պիտի ավելացնել վիկ, վարսակի խառնուրդ կամ ավելի լավ ե՝ աշնանախոտ:

Սիլոսի մեծ աւտարակների մօս սիլոս կը-
տըրտող ուժեղ գործիք են դնում: Մանր կտր-
տըրված մասսան խողովակով քշում են ու թա-
փում աշտարակի մեջ: Աշտարակի ներսում մի-
քանի հոգի տափտափում են սիլոսի մասսան:
Կերի համար սիլոսը հանում են գոնակներից,
վոր բացված են աշտարակի ամբողջ բարձրու-
թյամբ, ինչպես և ըստ հարկերի:

Իսկ յեթե փոսերում պիտի սիլորացներ, այդ
դեպքում փոսի մոտ բերած կանաչ բույսերը
պետք ե տախտակի վրա լցնել ու մանր կտր-
տել փոսի կողքին:

Կտրտված մասը լցնում են փոսը և վոր-
քան կարելի յե պինդ տափտափում են: Հատ-
կապես պինդ պիտի տափտափել փոսի պատերի
տակը:

Սիլոսը պետք չե աղել վճչ աշտարակնե-
րում և վճչ ել փոսերում: Բայց շատ ոգտակար
ե կտրտված խառնուրդի վրա թթված կաթ-
ցնցուղել: Մի տոնն սիլոսին մի լիոր կաթը
կհերիքի:

Մի որով, նույնիսկ մի զիշերով աշխա-
տանքն ընդհատելիս պետք ե փոսի մեջ լցված

մասսայի վրա տախտակի կտորներ շարել ու դրանց վրա ծանրություն, թեկուզ խոշոր քարեր դնելու Վորբան ավելի նսի սիլոսը, այնինան լավորակ կլինի նա:

Յերբ փոսը լցված ու տափտափվում ե այնպիս, վոր մեծ ծանրության տակ ել չի նստում, դրանից հետո փոսում լցված սիլոսի վրա ելի յեն լցնում այնինան, վոր սիլոսը բլուրի ձեվ ստանա: Բլուրը ծածկում են կրծռնքով, չկտրտված կռատուկով կամ ել ծառի կանաչ, մատաղ ճյուղերով: Դրանից հետո 20 սանտիմետր հաստությումը հող են լցնում բլուրի վրա:

Այդպես թողնում են մինչև ցրտերն ընկնելը:

Հողը պետք ե տափտափել և հարթեր: Յեթէ նստելիս հողը ճեղքեր տա, պետք ե այդ ճեղքերը լցնել վահ անձրե, վահ ոդ պիտի չթափանցի սիլոսի մեջ: Լավ կլինի ծածկել յեղենուճյուղերով կամ դարմանով:

Յերբ ցրտերն ընկան, պետք ե այդ ծածկը վերցնել ու դրա փոխարեն ծածկել դարմանախտան աղբով կամ չոր տերեներով, 30 սանտիմետր հասա շերտառի: Իսկ դրա վրա նորից պիտի հող լցնել և յեղենու ճյուղերով կամ դարմանով ծածկել: Այդ վիճակում թողնում են, վոր սիլոսը հասնի:

Յեզիւսացորենի սիլոսը բոլորից շուտ և
համուռմ և կերի համար պատրաստ և լինում մի
ամսից հետո:

Բոլորից ուշ համուռմ և առվույչը՝ 3—4
ամսում:

Մնացած բույները համուռմ են յերկուամ-
սում:

Լավ սիլոսը մեղքի կամ գինու հոտ ունի:

Ի՞ՆՉՊԵՍ ԵՆ ՇԻՆՈՒՄ ՄԻԼՈՍԻ ՓՈՍԸ

Սիլոսի փոսը պետք է գոմին մոտիկ լիո-
րել: Պետք է այնպիսի տեղ ընտրել, վոր վոչ մի
կողմից վոչ ջուր և վոչ ել աղբաջուր չոսի դե-
պի փոսը:

Փոսը պիտի կլոր լինի, 3 մետր խորու-
թյամբ և 2 մետր լայնությամբ:

Փոսի պատերը պիտի ուղղաձիգ լինեն, ա-
ռանց դուրս և ներս ընկած տեղերի: Պատերի
ուղիղ լինելը պիտի ստուգել քանոնափայտով:

Փոսի հատակն ու վերել պետք է միկնույն
չափի լինեն: Վատ չի լինի, յեթե հատակը վե-
րեկից քիչ նեղ լինի, բայց վոչ մի զեպքում հա-
տակը չի կարելի վերեկից լայն անել: Այդ դեպ-
քում սիլոսը նատելիս, փոսի մեջ ոդ կթա-
փանցի:

Յեթե հատակը վերեից ավելի լայն դուրս դա, պետք է վերել լայնացներ Այդ դեպքում պետք է քանոնափայտով և շաղուղով խնամքով քերել պատճերը, վոր ներս ու դուրս ընկած տեղեր ու անկանոնություններ չմնան:

Յեթե փոսի մեջ խլուրդի, մկների կամ այլ կենդանիների բնից պատճենն, պետք է դրանք վորքան կարելի յե խորը մաքրել և ցեխակալել:

Փոսից հանված նողը պետք է կիսաշրջանի ձեփով զցել փոսի կողքը, յետեվից սի մետք նեռու: Դա անում են, վոր հողի ծանրությունից փոսի յեզրերը չքանդվեն: Հողից ազատ տեղում տախտակներ են շարում վրան սիլոս կրտրելու համար:

Յեթե հիմը կավային է, պատերը լավ կը-սպահանվեն: Իսկ յերե հիմը ավագային է, այդ դեպքում պատերը պիտի տախտակներով յերե-սակալվեն: Դրա համար կարելի յե վերցնել փուշտաեեր: Դրանից պետք է իրար լավ կպչեն: Մեկը պիտի գնել լայն զլուխը ցած, իսկ մյուռ-սը, կողքինը՝ նեղ զլուխը ցած: Տախտակները պետք է իրար ամրացնել մեխերով:

Եւ ավելի պինդ լինելու համար կարելի յե վերեվից ու ներեւելից փայտե զտի դնել: Մեջ-տեղից զոտի չի կարելի գնել, վորովհետեւ զա կիսանզարի սիլոսի լավ նստելուն:

Հատակն ել պիտի տախտակել նախապես
մաքուր կավ լցնելուց ու տա իտա իելուց հետո

Այս բոլոր աշխատանքները յուրաքանչյուրն
ինքը կարող ե անել:

ԻՆՉՊԵՍ ՇԻՆԵԼ ՑԵՄԵՆՏԱԾ ՓՈՍՉ

Ե՛լ ավելի լավ ե փոսի պատերը յեփած
աղյուսով կամ քարով ցեմենտառաղախ յերե-
սակալել: Մի փոսին կերթա 5 սայլ ավաղ, 2
սայլ խիճ, 500 հատ աղյուս: և 2 տակառ ցե-
մենտ:

Այդ հետեւյալ կերպ ե արգում: Փոսը փոր-
գում ե 3 մետր խորությամբ և $2\frac{1}{2}$ մետր լայ-
նությամբ: Յերե հիմք կավային ե, այն ժամա-
նակ հատակը լցնում են ավաղի շերտ 10 սան-
տիմետր հաստությամբ: Այդ ավաղը պետք է
թեթև թրջել և պինդ տափառափել: Խոկ յերե
հիմք ավազային ե, այդպիսի ըերտ դնելու կա-
րիք չկա:

Յերկըսորդ շերտի համար խառնուրդ և պատ-
րաստվում, մի մաս ցեմենտ և 10 մաս ավաղ:
Այդ խառնուրդը պիտի թեթև թրջել և գով
տափառափել փոսի հատակի վրա՝ 20 սանտի-
մետր հաստությամբ շերտով:

Այդ աշխատանքից հետո մի որ պիտի ընդմիջում անել, վոր ցեմենտը պնդանաւ Դրանից հետո հիմքը արդեն պատրաստ կլինի:

Ապա ոկտումբ են պատը դնել:

Ամենից առաջ բերոնի վրա յերկու սանտիմետր հաստությամբ ավաղ են լցնում և տախտակ են դնում, վոր վոտքերով գեռ թարմ բերոնը չփչացվի:


Պատերի յեփած աղյուսը պետք ե, վորքան կարելի յե, լավ թրջել ջրով:

Պատերը շարվում են՝ աղյումները կողքի դնելով, կամ ինչպես վորմնագիրներն են առում՝ քառորդ աղյուսի լայնքով:

Տարի համար շաղախը պատրաստում են մի մաս ցեմենտից և 4 մաս ավաղից:

Տար անելիս կարերը չեն լցնում, այսինքն փոսի ներսի կողմից աղյումների արանքը շաղախով չեն ծեփում: Աղյումների արանքին մընացած ճեղքերի մեջ սվաղը մտնում ու այդ պատճառով ել պատին ավելի պինդ ե կոլչում:

Սվաղն արվում ե աղյուսի պատը դնելուց հետո Դրա շաղախը պատրաստում են մի մաս ցեմենտից և 3 մաս ավաղից: Առաջ պատերն են սվաղում: Ապա հատակը մաքրում ու սվաղում են, վոտները տախտակի վրա դնելով: Փոսից վարդեալը պարանով ե դրսը դաշտ:



ՅԵԹԵ ցԵՄԵՆՍ աՎԵԼԱՆԻԱ, կարելի յԵ այն
խառնել կԵս-առկԵս աՎԱԳԻ հԵՏ ու դՐԱՆՈՎ սՌ-
ՎԱՂԸ հղկԵԼ:

Աղյուսի պատը հողի յԵՐԵՍԻց մոտ $\frac{1}{2}$ մետր
վերև ե բարձրացվում: Դրա չորս կողմն են լրց-
նում փոսից դուրս տված հողը: Բայց դրանից
առաջ պետք ե պատի յԵՏԿԵԼ լցված հողը թրջել
ցնցուղով:

Շարելու համար լավ կլինի, յԵԹԵ վորմնա-
դիր վարձվի:

Այդպիսի ցԵՄԵՆՏՈՎ փոսերը հարմար կլի-
նեն վոչ մեծ կոլեկտիվների ու խորհրդային
տնտեսությունների համար: Կարելի յԵ միքանի
այդպիսի փոսեր մի շարքի շինել: Խոկ բոլոր փո-
սերի վրա կարելի յԵ մի ընդհանուր չարդախ
շինել:

Բայց դրանից անհամեմատ ավելի լավ կլի-
նի, յԵԹԵ չքավորներն ու միջակները ավելի խո-
շոր միություն կազմեն և սիլոսի ամերիկան
մեծ աշտարակ շինեն:

ՓՈՍԵՐՈՒՄ, ԹԵ ԱՇՏԱՐԱԿՆԵՐՈՒՄ ՍԻԼՈՍԱՑՆԵԼ

Աշտարակներում սիլոսացնելը շատ ավելի
ձեռնուու յԵ, քան փոսերում:

Աշտարակներում ավելի լավ սիլոս ե պատ-
րաստվում, քան փոսերում: Բանը նրանումն ե,

վոր յերբ սիլոսը թթվում է, տաքանում եւ Սիլոսն, ինչպես ասում են, ինքնիրեն տաքանում եւ Այստեղ կտառարփում ե նույնը, ինչ լավ չչորսցած խոտի բլուների մեջ։ Այստեղ ել խոտը տաքանում ե և խոտի վորոշ մասը կարծես թե այրվում եւ։

Ամեն մի կերպ պահելիս, դրա մննդատու նյութերի վորոշ մասը կորսվում եւ նույնպես և սիլոսը ինքնիրեն տաքանալով, կորցնում ե իր մննդարար նյութերի մի մասը։ Գիտնականները հաշվել ու գտել են, վոր սինդարաւ նյութերի կորուսը աւտարակներում ավելի քաջ է, քան փոսերում։

Ե՞նչ կտացվի, յեթե յուրաքանչյուր արնակեսություն իրեն համար տոանձին-տոանձին սիլոսի փոքր փոսեր շինի Այն ժամանակ յուրաքանչյուր անտեսություն անդադար նյութերի ավելորդ կորուստ կունենա։ Իսկ ամբողջ գյուղն ընդհանուր առմտեր զգալի չափերի հասնող սինդարաւ նյութերի կորուս կունենա։

Մննդարար նյութերի անհամեմատ ավելիքի կորուստ կլինի, յերբ չքավորներն ու միջակները միանան ու սիլոսի ընդհանուր մեծաշտարակ շինեն։

Սիլոսի մեծ աշտարակ կառուցելն իհարկե բարդ ու թանգ գործ է։ Բայց խորհրդային իշ-

խանությունն այս դեսկրում՝ ոգնության և զալիս չքավորներին և միջակներին։ Սիրոսի մեծ աւտարակների կառուցման համար կառավարությունը չխավորներին յեվ միջակներին վարձի և տալիս յեվ տեխնիկ և տրամադրում։

Յուրաքանչյուր աշտարակին 5—6 հազար ռուբլի վարձ և տրվում, այսինքն այնքան, վորքան գաստորեն կնսափառ մի աշտարակի կառուցումը։


Վորպեսզի չքավորներն ու բատրակները այդ ոգնությունն ստանան, պետք և կուլեկտիվ տնտեսություն կազմակերպեն, կոլեկտիվ գոմ կազմեն։

Ի՞նչից սկսել, գործը ինչպես առաջ տանել և ուր դիմել փող և տեխնիկ ստանալու համար.—այդ բոլորը կասի գյուղատնտեսը։ Մի բան պիտի լավ միտը պահել—գործը պիտի առանց կուլակի մասնակցության առաջ տանել։


ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0001634



ԳԻՒՅ Յ ԿՈՊԵԿ ՄՊԱ. (1/4 մամղու)



024.



С. Е. ПЕТРОВ

Сллосование норма

Госиздат ССР Армении
Эривань—1930